AUA Հայաստանի Ամերիկյան Համալսարան

Գեղարքունիքի մարզի մարզպետ
պարոն Գնել Սանոսյանին

Հայաստանի ամերիկյան համալսարանի
Մանուկեան Սիմոն Գործարարության և տնտեսագիտության ֆակուլտետի
գործարարության բակալավրի ծրագրի ղեկավար, համակից պրոֆեսոր
Քնար Խաչատրյանից

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սանոսյան

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանում 2016 թվականից մինչ օրս հետևյալ հաստիքները զբաղեցրած պաշտոնյաների կենսագրությունները (բացառությամբ ներկայումս տվյալ պաշտոնները զբաղեցրած անձանց, ում կենսագրությունը հասանելի է մարզպետարանի կայքում). մարզպետի խորհրդական (առաջին և երկրորդ), գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ: Տեղեկությունը խնդրում եմ տրամադրել էլեկտրոնային տարբերակով՝ հետևյալ հասցեով. *kkhachatryan@aua.am:*

Հարկ ենք համարում նշել, որ մարզպետի և նրա տեղակալների մասին տեղեկատվությունը ստացել ենք ՀՀ Կառավարությունից: ՀՀ վարչապետի աշխատակազմի գրասենյակից մեզ հայտնել են, որ մարզպետի խորհրդականների և գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետերի մասին տեղեկատվությունը հավաքագրվում է մարզպետարանի կողմից, քանի որ վերոհիշյալ հաստիքների նշանակումները կատարվում են մարզպետի կողմից, ուստի մեզ ուղղորդել են տվյալ պաշոնյաների կենսագրությունները ստանալու հարցումով կրկին դիմել մարզպետարանին:

Վերոհիշյալ տեղեկությունների նկատմամբ կիրառելի չեն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում թվարկված տեղեկությունների տրամադրման մերժման հիմքերը: Ավելին. նույն օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողների պարտականությունները և տվյալ հոդվածի 2-րդ կետով առանձնացնում է տվյալների պահպանման պարտականությունը: Գնտում ենք, որ մեր կողմից հայցված տեղեկատվությունը, լինելով արդեն իսկ նախկինում մարզպետարանի կայքում հրապարակված տեղեկատվություն նշված հաստիքները զբաղեցրած անձանց պաշտոնավարման ընթացքում, հանդիսանում են պահպանման ենթակա տեղեկություններ և հետևաբար «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն ենթակա են հրապարակման:

Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պող., 40 շենք
+374 60 69 40 40 | +374 10 32 40 40
Քալիֆորնիա 94607, Օքլենդ, Բրոդվեյ 1000, Սյուտ 280
+1 510 925 4282
info@aua.am | www.aua.am

Գեղարքունիքի մարզպետարան
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
13 01 2020
Մուտք թիվ Մ-0226-2020

Հայաստանի ամերիկյան համալսարանը հավատարմագրված է ԴԲԱԸ ՌՈՒՆ-երի հանձնաժողովի (WASC Senior College and University Commission) կողմից՝ 985 Atlantic Avenue, #100, Alameda, CA 94501, 510.748.9001:

Ցանկանում եմ տեղեկացնել, որ վերոհիշյալ տեղեկությունների անհրաժեշտությունը բխում է Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) գիտնականների՝ համակից պրոֆեսոր Ալեքսանդր Գրիգորյանի և իմ՝ համակից պրոֆեսոր Քնար Խաչատրյանի կողմից իրականացվող հետազոտության պահանջից: Հետազոտությունը ուսումնասիրում է Հայաստանի բոլոր մարզերում գյուղատնտեսական զարգացման ծրագրերում ներգրավված պաշտոնատար անձանց կրթական և մասնագիտական ուղին: Տվյալ տեղեկությունները կնպաստեն Հայաստանի մարզերում գյուղատնտեսական և արդյունաբերական ոլորտների զարգացման ուսումնասիրությանը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումս:

Կանխավ շնորհակալ եմ՝

10.01.2020

Քնար Խաչատրյան

Մանուկեան Սիմոն Գործարարության և տնտեսագիտության ֆակուլտետի
Գործարարության բակալավրի ծրագրի ղեկավար, համակից պրոֆեսոր

Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պող., 40 շենք
Հեռախոս՝ +374 60 69 25 68
Էլ. հասցե՝ kkachatryan@aua.am www.aua.am